evocaBANK



# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐԿ

## Վարկի տրամադրման նպատակը

**Վարկը տրամադրվում է առաջնային կամ երկրորդային շուկաներից անհատական օգտագործման թեթև մարդատար տրանսպորտային միջոց/ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով: Երկրորդային շուկայից ձեռք բերվող ավտոմեքենաների դեպքում վարկավորումը կարող է իրականացվել՝**

- **Ձեռք բերվող տրանսպորտային միջոցը, որի վաղեմությունը չպետք է գերազանցի 7 տարին,**
  **Ռուսական արտադրության ավտոմեքենաների դեպքում վարկավորումը իրականացվում է բացառապես առաջնային շուկայից ձեռք բերելու պայմանով,**
- **ոչ ռուսական արտադրության մինչև 7 տարվա վաղեմության ավտոմեքենա ձեռք բերելու համար:**

## Ովքեր կարող են դիմել

**18- 63 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 63 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:**

| | | | |
|---|---|---|---|
| **Գումար** | 4,000,000 - 50,000,000 ՀՀ դրամ | | |
| **Ժամկետ** | Հաստատուն տոկոսադրույք | 36 - 60 ամիս | |
| | Լողացող տոկոսադրույք | 61 - 84 ամիս | |
| **Տարեկան անվանական տոկոսադրույք** (Հաստատուն) | Առաջնային * շուկա | Եկամուտների հիմնավորմամբ | 13%-15% |
| | | Առանց եկամուտների հիմնավորման | 16% -17% |
| | Երկրորդային շուկա | Եկամուտների հիմնավորմամբ | 15%-16% |
| | | Առանց եկամուտների հիմնավորման | 17% -18% |
| **Տարեկան անվանական տոկոսադրույք** (Լողացող) | Առաջնային շուկա | սկսած 14%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 5%-ից + փոփոխուն բաղադրիչ) | |
| | Երկրորդային շուկա (կիրառելի է միայն մինչև 3 տարվա վաղեմություն ունեցող տրանսպորտային միջոցների ձեռք բերման դեպքում) | սկսած 15%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 6%-ից + փոփոխուն բաղադրիչ) | |
| | Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմ՝ +4% | | |
| | Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը կսկսի վերանայվել վարկի տրամադրման պահից 36 ամիս ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթվից սկսած և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ կիրառելով վերանայման պահին Բանկում գործող (կայքում փաստացի հրապարակված) տոկոսադրույքը: Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ | | |

## Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր

| | |
|---|---|
| **Ժամկետանց վարկի համար** | Օրական 0.015% |
| **Ժամկետանց տոկոսագումարի համար** | Օրական 0.1% |

## Վարկի վերադարձելիության ապահովման միջոց

1. **Ձեռք բերվող ավտոմեքենան**
2. **Կարող է պահանջվել ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորությունների առկայություն**

| | | |
|---|---|---|
| **Գրավադրվող գույքի գնահատում** | • Ավտոսրահից ձեռքբերման դեպքում տրանսպորտային միջոցի գնահատում չի իրականացվում, այլ որպես գրավադրման արժեք հիմք է ընդունվում ավտոմեքենա իրացնող ընկերության կողմից Բանկի էլեկտրոնային համակարգում կամ ներկայացված տեղեկանքում նշված արժեքը/առուվաճառքի արժեքը: • Երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում գրավադրվող գույքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից | |
| **Վարկի տրամադրման եղանակը** | Անկանխիկ | |
| **Վարկի տրամադրման միանվագ կամ ամսական սպասարկման վճարներ** | Չի սահմանվում | |
| **Կանխավճար** | Առաջնային շուկա | Եկամտի վերլուծությամբ՝ նվազագույնը 10% |
| | Երկրորդային շուկա | Եկամտի վերլուծությամբ՝ նվազագույնը 30% |
| | Առանց եկամուտների վերլուծության | Նվազագույնը՝ 40% |
| **Ապահովագրություն** | Տրանսպորտային միջոցի ԿԱՍԿՈ ապահովագրություն - պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի ամբողջ ժամկետի ընթացքում, առնվազն վարկի մայր գումարի մնացորդի չափով: Առաջնային շուկայից ավտոմեքենայի ձեռքբերման դեպքում ԿԱՍԿՈ ապահովագրությունը կարող է կնքվել Բանկի հաշվին և վարկի մայր գումարի մնացորդի չափով՝ համաձայն համագործակցող ընկերության կետ կնքված պայմանագրի դրույթների: | |
| **Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման Ժամկետներ** | • Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: • Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: | |
| **Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ** | • Ավտոմեքենայի ձեռքբերման և գրավադրման հետ կապված պետական իրավասու մարմնում գրանցման վճարներ • Այլ վճարներ համաձայն Բանկում գործող սակագներ և դրույթների: Առցանց վարկավորման համակարգի միջոցով տրամադրվող վարկերի դեպքում շարժական գույքի գրավի հաստատման (ձևակերպման) միջնորդավճար չի կիրառվում: | |

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ 13.82%-23.12%**

Թարմացվել է 01.07.24-ին

Evocabank-ը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից:
www.evoca.am +374 10 60 55 55
Available on the iPhone App Store
ANDROID APP ON Google play

